ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION
AND INFRASTRUCTURES OF RA

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

"YEREVAN TPC" CJSC

ՀՀ, ք. Երևան 0053, Արին-Բերդի փ. 3-րդ նրբ., 3

RA, 0053 Yerevan, Arin-Berdi st. 3rd Lane, 3

www.ytpc.am +374 11 472 760 | +374 11 472 771 mailbox@ytpc.am

N° ԱԲ/272-2024

19 06 2024թ./y.

ՈՐՈՇՈՒՄ N 6

«ՄԱՔՍՎԻՆ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 88-րդ հոդվածի պահանջներով՝

Պ Ա Ր Զ Վ Ե Ց

<u>Գործի նախապատմությունը.</u>

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն(այսուհետ՝ Պատվիրատու) 2024 թ-ի մայիսի 27-ին հայտարարել է գնանշման հարցման ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 24/43 ծածկագրով գնման գործընթաց՝ տաս չափաբաժիններով, իր կարիքների համար ֆիլտրերի ձեռքբերման: 2024 թ-ի հունիսի 3-ին գնահատող հանձնաժողովի կողմից բացվել են մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, որի ժամանակ պարզվել է, որ այլ մասնակիցների հետ միասին գնման գործընթացին ութ չափաբաժինների համար հայտ է ներկայացրել «Մաքսվին Գրուպ» ՍՊԸ-ն(այսուհետ՝ Մասնակից): Վերջինս մինչ այդ մասնակցել էր Պատվիրատուի կողմից կազմակերպված մեկ այլ ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 24/21 ծածկագրով գնման գործընթացին, որին մասնակցելու համար գնահատող

հանձնաժողովը համաձայն հանձնաժողովի քարտուղարի զեկուցագրի, որոշում է կայացրել, հայտում ոչ հավաստի տվյալներ ներկայացնելու համար Մասնակցի հայտը մերժել և դիմել Լիազոր մարմնին Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում ներառելու համար: ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 24/21 ծածկագրով գնման գործընթացի վերաբերյալ ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից ստացվել էր գրություն Մասնակցի վերաբերյալ, որից երևում է, որ «Մաքսվին Գրուպ» ՍՊԸ-ն համաձայն ՀՀ կառավարության 2017 թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ի ենթակետով սահմանված Կարգի Որոշման 121–րդ և 119-րդ կետերի մինչև 2026 թ-ի մարտի 26-ը իրավունք չունի մասնակցելու գնման գործընթացին:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարի 04.06.2024թ-ի իր զեկուցագրում նշվել է, որ չնայած այն հանգամանքի, որ Մասնակիցը իր հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէր ՀՀ Ֆինանսների նախարարության gnumner.am կայքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված, գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում, սակայն «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 24/21 գնման գործընթացի(առանցքակալների ձեռքբերման) ամփոփման ժամանակ պարզվել էր, որ «Մաքսվին Գրուպ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասերի սեփականատեր Արամ Արարատի Հովհաննիսյանը միաժամանակ հանդիսանում է «Մաքսվին» ՍՊԸ-ի գործադիր տնօրենը, և համարվում է **<u>փոխկապակցված անձ</u>** է «Մաքսվին» ՍՊԸ-ի 100% բաժնեմասերի սեփականատեր Արտավազդ Արարատի Հովհաննիսյանի հետ, երկու ընկերություններն էլ գրանցված են միևնույն հասցեում՝ ք. Երևան, Դավիթաշեն 2-րդ թաղ, շ 4/3, իսկ «Մաքսվին» ՍՊԸ-ն ընդգրկված է գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում 2024 թ-ի մարտի 16-ից մինչև 2026 թ-ի մարտի 26-ը:

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 24/43 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 որոշմամբ փաստել է, որ «Մաքսվին Գրուպ» ՍՊԸ-ն մրցույթին մասնակցելու իր հայտի հավելված թիվ 1-ում ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տվյալներ՝ փոխկապակցված անձանց մասով:

Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովի որոշում է ընդունել դիմել լիազոր մարմին, «Մաքսվին Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում ներառելու համար:

<u>Գործի քննության իրավական հիմքերը.</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետը՝ «Խախտել է .... Գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունները..... Կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադրեցմանը», ՀՀ կառավարության 2017 թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ի ենթակետով սահմանված Կարգի Որոշման 121–րդ կետը՝ Մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ **<u>փոխկապակցված անձանց</u>** գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը և Կարգի 119-րդ կետի 2-ենթակետի գ) կետը՝ «ֆիզիկական և իրավաբանական անձիք համարվում են **<u>փոխկապակցված</u>**, եթե նրանք հանդիսանում են խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալի, խորհրդի անդամի, **<u>գործադիր տնօրեն</u>**, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականցնող կոլեգիալ մարմնի նախագահ»:

Որոշում եմ

1. «Մաքսվին Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը համաձայն գնահատող հանձնաժողովի որոշման անհրաժեշտ է ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով:
2. Որոշումը տրամադրվում է «Մաքսվին Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը)՝ Վաճառողին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Մաքսվին Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն իրազեկելուն հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ-ի

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Պ/Կ՝ **Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

Կատարող

Ռ. Եղոյան 011 43 03 42